

1. Սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Արցախում սանձազերծած պատերազմի հետևանքով 15.12.2020թ. դրությամբ Վայոց ձորում ժամանակավոր բնակվում է 2001 արցախցի:

ՀԱՄԱՅՆՔ	ԱՆՁԱՆՑ ԹԻՎ
Եղեգնաձոր	259
Ջերմուկ	850
Եղեգիս	218
Զառիթափ	111
Արենի	149
Մալիշկա	146
Գլաձոր	119
Վայք	149
Ընդամենը	2001

2. Վայոց ձորի մարզ են տեղափոխվել Արցախի Հանրութ, Շահումյան, Շուշի, Քաշաթաղ, Մարտունի, Մարտակերտ, Ասկերան շրջաններից:

	Հաղրութ	Շահումյան	Շուշի	Քաշաթաղ	Մարտունի Մարտակերտ Ասկերան
ՎԱՅՈՑ ՁՈՐ	134	23	206	826	323

3. Վայոց ձորի մարզում գտնվող արցախցիները բնակվում են.

ՀԱՄԱՅՆՔ	Արցախցիների բնակության վայր
Եղեգնաձոր	Բնակելի տներում
Ջերմուկ	Բնակելի տներում
Եղեգիս	Բնակելի տներում և Հայ առաքելական եկեղեցու թեմապատկան ճամբարում
Զառիթափ	Բնակելի տներում
Արենի	Բնակելի տներում
Եղեգիս	Բնակելի տներում
Գլաձոր	Բնակելի տներում
Վայք	Բնակելի տներում

4. 5. Մարզպետարանի սոց աջակցության շտաբը, որի անդամներն են նաև համայնքապետարանների սոց աշխատակիցները, սեպտեմբերի 27 ից սկսած մինչ օրս էլ շարունակում են արցախցիների կարիքի գնահատում իրականացնել, որին համապատասխան կոորդինացվում է պետական գնումներով նախատեսված

պարենային և ոչ պարենային աջակցության ձեռքբերումն ու բաշխումը, ինչպես նաև համակարգվում է հումանիտար աջակցության ստացումն ու բաշխումը Արցախից ժամանած անձանց համար: Հոկտեմբեր- նոյեմբեր ամիսներին արցախցիներին հյուրընկալած հյուրատների կոմունալ վճարները վճարվել են պետության կողմից՝ ՏԿԵ նախարարության հետ համագործակցաբար, իսկ բնակարանների կոմունալ վճարումների համար բարերարների կամ կազմակերպությունների աջակցությունն ուղորդվել է համայնքներ՝ հյուրընկալած ընտանիքների արձեռնառնությամբ հաշվեհամարներին կատարված ուղիղ վճարումների միջոցով: Դեկտեմբեր ամսից, քանի որ մեկնարկել են և կմեկնարկեն արցախցիների և հյուրընկալող ընտանիքների աջակցության միջոցառումները, կոմունալների վճարման խնդիրը ավելի հեշտ կլուծվի: Հիմնական խնդիրը կմնա վառելիքի ջեռուցման խնդիրը, որը նույնպես մարզպետարանի սոց աջակցության շտաբը փորձում է գործընկեր կազմակերպությունների միջոցով լուծման տարբերակներ գտնել:

6. Հանձնված Քաշաթաղ, Հադրութ, Շուշի, Շահումյան և այլ համայնքներից Վայոց ձոր են տեղափոխվել նաև այնպիսի անձինք, ովքեր 20-25տ. առաջ մարզում չունենալով հեռանկարային հնարավորություններ գնացել են ԱՀ վերոհիշյալ տարածքներ, օգտվելով տրվող հնարավորություններից ձեռք բերել գույք, ստեղծել տարբեր ոլորտների արտադրություններ, զբաղվել եկամտաբեր զբաղմունքներով՝ գյուղատնտեսություն, գյուղ մթերքի արտադրություն, անասնապահություն, վարչական պատասխանատու աշխատանքներ: Ընտանիք են կազմել , դպրոցներ ու մանկապարտեզներ հիմնել, այժմ կորցնելով իրենց անձնական ինչքը, պետական և ոչ պետական աշխատանքները, հայտնվել են մարզում՝ չունենալով կացարան և կենսաապահովման անհրաժեշտ գույք: Հիմնականում ժամանակավոր բնակեցվել են դատարկ տներում, Արցախ վերադառնալու հիմնական բնակության վայր ընտրելու անորոշ հեռանկարով: Շարունակելով գնահատել կարիքները մարզպետարանը փորձում է աջակցել զբաղվածության ապահովմամբ, խնդիրների վերհանման և դրանց լուծումն տարբերակներ գտնելով՝ համայնքապետարանների, մարզում գործող ընկերությունների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների հետ համատեղ: Կան որոշ անձինք, ովքեր ունեն հող կամ կիսակառույց տուն, որտեղ այս պահին բնակվելը անհնար է, այս ուղղությամբ հետազայում կարվեն ուսումնասիրություններ համայնքապետարանների հետ համագործակցաբար, աջակցության հնարավոր տարբերակներ գտնելու համար: